AURORA HUMANITARIAN INITIATIVE

Հուլիսի 9, 2026 թ.

Սիրելի ընկեր,

Մարդասիրական ճգնաժամերի առաջնագծում տեղի ունեցող իրադարձությունների մեծ մասը երբեք չի հայտնվում լրահոսում, իսկ տեղում աշխատող մարդիկ հազվադեպ են ստանում հնարավորություն ներկայացնելու իրենց պատմությունը: «Ավրորան» օգնում է փոխել այս իրականությունը:

Իսմայիլ Ալաբդուլա

Իսմայիլ Ալաբդուլան անգլերենի ուսուցիչ էր Հալեպի գյուղական շրջաններից մեկում, երբ 2011-ին Սիրիայում քաղաքացիական պատերազմ սկսվեց: Երբ երկրի իշխանությունը բանակը հանեց խաղաղ բնակիչների եւ քաղաքացիական ենթակառուցվածքների դեմ, Իսմայիլը միացավ «Սպիտակ սաղավարտներ» (White Helmets. այժմ՝ Սիրիայի քաղաքացիական պաշտպանություն) կազմակերպությանը: Ավելի քան մեկ տասնամյակ նա օգնել է փրկել խաղաղ բնակիչների կյանքը՝ դուրս բերելով նրանց փլատակներից, փաստագրել հարձակումները եւ միջազգային հարթակներում հանդես եկել նրանց անունից, ովքեր զրկված էին այդ հնարավորությունից:

Նա հունիսի 16-ին մեկնարկած ***«Մարդասեր հերոսներ. ձայներ առաջնագծից»*** խորագրով հանդիպումների շարքի առաջին թողարկման հյուրն էր: «Ավրորան» այս ամենամսյա առցանց շարքն իրականացնում է Յեյլի համալսարանի Հանրային առողջապահության դպրոցի PEACE՝ Հավասարության, հասանելիության եւ համայնքահեն կրթության ծրագրի հետ համագործակցությամբ: Այն «Ավրորա 2.0»-ի տեսլականը կյանքի կոչելու ուղիներից մեկն է. մենք հարթակ ենք տրամադրում «Ավրորայի» մարդասիրական համայնքի ադամներին, որպեսզի նրանք անձամբ ներկայացնեն իրենց պատմությունները:

Հանդիպման ընթացքում Իսմայիլը խոսեց ակտիվ պատերազմական գոտիներում առաջինն արձագանքելու ծանր պատասխանատվության մասին. *«Դու անում ես հնարավոր ամեն ինչ: Դու անում ես, ինչ պարտավոր ես անել»,- ասաց նա: «Բայց չես կարող փրկել բոլորին»:*

ԴԻՏԵՔ ԱՌԱՋԻՆ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

«Մոսեկա» գործողությունների նախագիծ

Կարեւոր է, երբ նկատում են, բայց նույնքան կարեւոր է, թե ինչ է հաջորդում դրան: Նախորդ ամիս «Ավրորա» մրցանակի դափնեկիր բժիշկ Դենիս Մուկվեգեն երկրորդ փուլով դրամաշնորհներ հատկացրեց տեղական մարդասիրական գործիչներին Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում (ԿԴՀ), Սոմալիում, Մալավիում, Բուրկինա Ֆասոյում եւ Կոլումբիայում: Բժիշկ Մուկվեգեն ինքն է ընտրել շահառուներին՝ աջակցելով այն մարդկանց եւ կազմակերպություններին, որոնց ճանաչում է եւ վստահում: Այս մոդելը պարզ է եւ արդյունավետ, ինչի մասին վկայում է վիճակագրությունը. վստահելի կապերի միջոցով տրամադրվող ֆինանսավորումն ավելի արագ է հասնում համայնքներին, քան դրսից եկող օգնությունը:

Կարեւոր է ճիշտ ընտրված ժամանակը: ԿԴՀ-ն այժմ բախվում է Էբոլայի համաճարակի բռնկման վտանգավոր խնդրին, եւ այս փուլում տրամադրված ֆինանսավորման մի մասն ուղղվում է Հարավային Կիվու նահանգում **«Մոսեկա» գործողությունների նախագծին**՝ աջակցելով համայնքային կրթությանը, կանանց հմտությունների զարգացմանը եւ տեղում Էբոլայի վերաբերյալ իրազեկման աշխատանքներին:

Այսպես է հնարավոր ապահովել կայուն աջակցություն՝ ոչ թե մեկանգամյա միջամտության, այլ առաջնագծում աշխատող մարդկանց հետ կայուն հարաբերությունների միջոցով: Երկու փուլում էլ ընդգրկված նախաձեռնություններից մեկի շրջանակում աջակցություն ստացած «Յենենգա առաջընթաց» (Yennenga Progress) կազմակերպության հիմնադիր Սթինա Բերգեն նշում է. *«Յուրաքանչյուր հպարտ ուսուցչի եւ կարդալ սովորող յուրաքանչյուր երեխայի հետեւում պակաս տեսանելի, բայց կենսական նշանակության անհրաժեշտ պայմաններ են՝ համառություն, ժամանակին վճարվող աշխատավարձ, կարգապահություն եւ երկարաժամկետ կառույցներ»:*

Աջակցելով «Ավրորային»՝ դուք օգնում եք, որ բժիշկ Մուկվեգեի դրամաշնորհին արժանացած կազմակերպությունների ու անհատների նման մարդասիրական կազմակերպություններն ու գործիչները շարունակեն իրենց աշխատանքը, իսկ նրանց ապավինող համայնքներն ստանան անհրաժեշտ օժանդակություն:

ԱՋԱԿՑԵՔ ԱՎՐՈՐԱՅԻՆ

«Ավրորայի» յուրաքանչյուր հերոսի հետեւում կանգնած է մեկը, ով առաջինն է ասել՝ աշխարհը պիտի լսի այս մարդու մասին: Եթե ճանաչում եք մեկին, որն իր մարդասիրությամբ արթնացնում է մարդասիրությունն այլոց մեջ, առաջադրեք նրան:

Թեկնածության առաջադրումն «Ավրորա» մրցանակին առաջին քայլն է դեպի ճանաչում, ֆինանսավորում եւ մարդասերների համայնք, որը հնարավորություն է տալիս տեղում գործող մարդասիրական գործիչներին անել ավելին:

ԱՌԱՋԱԴՐԵՔ ՀԻՄԱ

Երախտագիտությամբ՝

«Ավրորայի» թիմ

«Ավրորա» գրքի ակումբ

Մեր ընթերցանության անկյունում ներկայացնում ենք նրանց, ովքեր օգնում են ավելի լավ հասկանալու՝ ինչ է նշանակում լինել մարդ եւ մարդասեր:



«Ավրորա» մրցանակի դափնեկիր Ջուլիեն Լյուսենգեի ղեկավարած կլինիկան հայտնվել է Բունիայում Էբոլայի դեմ արձագանքման էպիկենտրոնում: Կարդացեք նրա մեկնաբանությունը «Associated Press»-ին՝ ինչպես են Էբոլայի բռնկման հետեւանքով կանայք հայտնվել ամենամեծ ռիսկային գոտում:



Հուլիսի 30-ին նշվող Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համաշխարհային օրվա նախաշեմին մենք ընթերցում ենք Սունիտա Քրիշնանի հուշագրությունը՝ «Ես այն եմ, ինչ կամ»: Սունիտան Ասիայում սեռական թրաֆիքինգի դեմ պայքարի խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ «Փրաջվալայի» հիմնադիրն է:

Նա իր գրքում պատմում է տասնամյակների աշխատանքի մասին եւ անդրադառնում այն ծանր հարցին, որին կրկին ու կրկին վերադառնում է՝ ի՞նչ է պետք չհանձնվելու, դեպի առաջ ճանապարհը շարունակելու համար:

«Ավրորայի» հանրային կապերի եւ ռազմավարական հաղորդակցության հարցերով տնօրեն Քոլին Թոմաս-Զենսենը խոսել է «The Mirror US»-ի հետ, թե ինչպես են Էբոլայի բռնկումը ԿԴՀ-ում եւ ավերիչ երկրաշարժը Վենեսուելայում բացահայտում իրավիճակը համաշխարհային մարդասիրական օգնության ոլորտում:

Եթե որեւէ միտք կամ մեջբերում տպավորել է ձեզ, պատմեք մեզ դրա մասին:

info@aurorahumanitarian.org

ԱՋԱԿՑԵՔ

Դեռ չե՞ք բաժանորդագրվել: Հիմա ճիշտ պահն է:

AuroraHumanitarian.org

AuroraLuminaries.com